ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

19 Սայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Եթե ոչ այսօր, ապա ե՞րբ

ՀՀ Կառավարությունն իր կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հայեցակարգում ամրագրում է, որ կենսաթոշակային համակարգը նախկին տեսքով պահպանելը ոչ միայն կարող է խորը ճգնաժամի հանգեցնել, այլև երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտել:

Այսօր իրավամբ կարող ենք արձանագրել, որ կենսաթոշակային համակարգին մեզանում համակողմանի անդրադարձ, ըստ էության, մինչև այսօր չի կատարվել: Արդյունքում այն շարունակում է դոփել հիմնականում մերժված, իսկ ներկայում նաև կենսաթոշակային «արդարությունը» խաթարող սկզբունքներով:

Հարկային դաշտում ցանկացած, թեկուզ և փոքր փոփոխություն, որպես կանոն, հանգեցնում է լայն արձագանքների, քննարկումների, բողոքների կամ առաջարկությունների: Մինչդեռ երբ բարձր պետական մակարդակով նշվում է, որ կենսաթոշակային բարեփոխումները խիստ հրատապ են և որ այն մնացած ոլորտների բարեփոխումներից էապես հետ է մնում, այս բարեփոխումները, չգիտես ինչու, այդպես էլ չեն հայտնվում քաղաքականության օրակարգի և հանրային քննարկումների կիզակետում:

Որ վաղն ընդվզում չլինի

Խորհրդային տարիներին մարդկանց աշխատավարձերի տարբերությունը մեծ չէր, գործազուրկներն էլ չնչին տոկոս էին կազմում, և կենսաթոշակային համերաշխության վրա հիմնված համակարգը լիովին բավարարում էր «արդարության» ընկալման համար: Նույնիսկ ԽՄ փլուզումից տարիներ անց էլ այսօրվա թոշակառուները չեն բողոքում տարբեր թոշակառուների հանդեպ նույնանման մոտեցում ցուցաբերելուց. հիմնական բողոքը թոշակի ցածր մակարդակն է:

Ներկա ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում մարդիկ էականորեն տարբեր աշխատավարձեր են ստանում, և նրանց աշխատավարձի հաշվարկից ելնելով՝ կենսաթոշակային ապահովագրական վճարները նույնպես տարբեր են: Արդեն իսկ կան ապագա թոշակառուներ, որոնց ներկա աշխատավարձից վերջին 5 տարում ապահովագրական հիմնադրամ այնքան գումար է փոխանցվել, որը, գործող համակարգի պայմաններում, արդեն իսկ չի կարող փոխհատուցվել նրանց թոշակի անցնելուց հետո մինչև կյանքի վերջ: Որքան գնում, անարդարության սեպն այնքան խորանում է: Տարիներ անց, երբ այսօրվա աշխատողները դառնան թոշակառու և վերափոխված կենսաթոշակային համակարգը շարունակի պարունակել անարդարության տարրեր, կամ մարդիկ տեսնեն, որ չարչարանքով վաստակած իրենց գումարներն ի չիք են եղել, բողոքի լուրջ ալիք կբարձրանա, ինչը հնարավոր է կանխել այսօր: Ճանապարհը մեկն է՝ բարեփոխումների ճիշտ սցենար ընտրելը:

Բարեփոխումների «գինը» և ընդգրկումը

Մի համակարգից մյուսին անցնելը որոշակի ծախսեր է պահանջում: Խոսքը ներկայում աշխատող սերնդի ուսերին դրվելիք կրկնակի բեռի մասին է, երբ մի կողմից նրանք պետք է «վճարեն» իրենց ապագա թոշակների համար, իսկ մյուս կողմից՝ ապահովեն այսօրվա թոշակառուների թոշակները: Նշված ծախսերը տարբեր կերպ կարող են արտահայտվել՝ հանրային ծախսերի կրճատում, հարկերի բարձրացում, այլ աղբ-

յուրներից մուտքերի ապահովում[1] և այլն: Այս հանգամանքը լրջագույնն է կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում, ուստիև պահանջում է լայնամասշտաբ հանրային քննարկում և սերունդների միջև համաձայնության ձեռքբերում: Այսօրվա կենսաթոշակները ցածր են Հայաստանում: Սա ցավալի է, սակայն միևնույն ժամանակ նշանակում է, որ բարեփոխման բեռը նույնպես թեթև կլինի: Այս հանգամանքն է ստիպում մասնագետներին պնդելու, որ Հայաստանում, ի տարբերություն շատ երկրների, կենսաթոշակային բարեփոխումները կանցնեն առանց էական «ցավերի» և միակ խնդիրը մնում է պարզել, թե ինչ ընդգրկվածությամբ կատարել բարեփոխումները և ինչպիսի սցենար ընտրել:

Սցենարներ՝ սեղանին

Բազմաթիվ գործոններ ու ցուցանիշներ պիտի հաշվի առնել՝ որոշելու համար, թե ինչպիսի կենսաթոշակային բարեփոխում պիտի անել: Գործոնների այդ բազմազանությունն ստիպում է տարբեր սցենարներ մշակել, որոնցից էլ հենց անհրաժեշտ կլինի ընտրել հետագա բարեփոխումների մոդելը և ընդգրկվածությունը: Ոգևորիչ է, որ նման հաշվարկներ այսօր արվում են: Միջազգային քաղաքականության և հետազոտությունների հայկական խումբը (www.armpolicyresearch.org) պատրաստվում է դեկտեմբերին հանրության ներկայացնել զարգացման երկու սցենար, որոնցից կարելի կլինի ընտրություն կատարել: Սցենարները հնարավորություն են ընձեռելու ոչ միայն գնահատել կենսաթոշակային ապահովագրական ֆոնդի հետագա զարգացումները թվային տեսքով, այլև տեղեկատվության մեծ աղբյուր են հանդիսանալու երկրի հետագա մակրոտնտեսական քաղաքականությունը համապատասխանեցնելու համար:

Ստվերից դուրս գալու ներքին պահանջարկը

Կենսաթոշակային բարեփոխումները, թերևս, դուռ կբացեն նրանց համար, ովքեր աշխատում են ստվերից դուրս, ում աշխատավարձը ձևակերպվում է այնքան, որքան գումար նա իրականում ստանում է: Այս բարեփոխումների առաջնային աջակիցները կլինեն օրինական, ստվերից դուրս դաշտում գտնվող բոլոր սուբյեկտները: Արագ և նպատակային կենսաթոշակային բարեփոխումներ իրականում շատ ավելի դրական հետևանքներ կարող են ունենալ, քան վաղօրոք հնարավոր է պատկերացնել, ինչն ամբողջությամբ փոխհատուցելու է բարեփոխման անցումային ծախքերը: Այն կարող է դառնալ ստվերային տնտեսության վերացման ևս մեկ կարևոր խթան՝ ավելի արդյունավետ կերպով իրողություն դարձնել այն, ինչ ոչ մի հարկային վարչարարություն ի վիճակի չէ անել:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2005թ-ի նոյեմբերի 11-ի «Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները Հայաստանում» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ:

[1] Ի դեպ, կենսաթոշակային բարեփոխումները ոչ պակաս, եթե ոչ առավել նշանակալից, սոցիալական ներդրում են, քան շինարարությունը կամ այլ ոլորտները, որտեղ այսօր տարատեսակ օգնության ծրագրերով միջոցներ են ներդրվում: Նման միջոցների ուղղումը բարեփոխումների սահուն ընթացքին թույլ կտա չավելացնել հարկային բեռը: